ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22

ք. Երևան 25 . 01 .2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ծառայության մատուցման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Շահումյան 7փ, 12 տ
կառավարական տուն 3	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1570063970690100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01298099
Հ/Հ 900011011724	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Վ. Բարսեղյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված N 1
25.01 .2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
					մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	72261160/501	դրամ	6 000 000	1	ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	Մինչև 25.12.2022թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի անվանումը	**Գնման առարկայի բնութագիրը**
«Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ»	Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգը, կառուցապատման նպատակով նախագծման, շինարարության, շահագործման թույլտվությունները կառուցապատողին առցանց տրամադրելու նպատակով մշակվել և փորձարկվել է համապատասխան համակարգչային ծրագիր: Էլեկտրոնային համակարգի միջոցով կառուցապատման թույլտվությունների (այդ թվում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), ճարտարապետաշինարարական նախագիծ, շինարարության կամ քանդման թույլտվություն, ավարտական ակտ կամ շահագործման թույլտվություն) տրամադրման ընթացակարգերն իրականացվում են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածով սահմանված հաջորդականությամբ, պայմաններով և ժամկետներում: e-Permits շինարարության թույլտվությունների կառավարման համակարգը հանդիսանում է շինարարության թույլտվությունների տրամադրման համար մշակված էլեկտրոնային հավելված: e-Permits-ը ծառայում է որպես իրավական օրենսդրական գործիք, որը փոխկապակցում է էլ-հայտատուներին (թե ֆիզիկական և թե իրավաբանական), ովքեր դիմում են շինարարության թույլտվությունների ձեռքբերման համար) մի կողմից և տեղական ինքնակառավարման կառույցներին՝ (Տեղական ինքնակառավարման մարմինները, Քաղաքաշինության կոմիտեն, Անշարժ գույքի կադաստրը, պետական եկամուտների կոմիտե (պետական եկամուտների կոմիտեն), Պետական վերահսկողական տեսչությունները) մյուս կողմից: e-Permits-ը ընդգրկում է կառավարման հետևյալ գործընթացների իրականացման հնարավորությունները՝ • **Առաջադրանք** – Նախաշինարարական գործընթաց, որը թողարկվել է ճարտարապետաշինարարական նախագծման առաջադրանքի հայցման և ձեռքբերման համար: Առաջին հայտադիմումը նախատեսված է Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից Ճարտարապետաշինարարական նախագծման առաջադրանքի ձեռքբերման նպատակով: Ճարտարապետաշինարարական նախագծման

	առաջադրանքը փատաթուղթ է, որը սահմանում է պարտադիր պայմաններ, պահանջներ և սահմանափակումներ ճարտարապետաշինարարական նախագծման փաստաթղթերի մշակման վերաբերյալ: • **Շինարարություն/Քանդում** – գործընթաց է, որը թողարկվել է շինարարության/քանդման թույլտվությունների հայցման և ձեռքբերման համար: Գործընթացը ընդգրկում է տարբեր կարողություններով բազմաթիվ դերակատարների, որոնք միմյանց միջև տարբեր փուլերում իրականացնում են տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակում: • **Շահագործում** – գործընթաց, որը թողարկվել է շահագործման թույլտվության հայցման և ձեռքբերման նպատակով: Սա գործընթացում վերջին քայլն է, որտեղ հայտատուն ձեռք է բերում ակտ, որը նրան օժտում է իրավունքով օգտագործել շինությունը և միևնույն ժամանակ հանդիսանում է հիմք Անշարժ գույքի պետական կադաստրում շինարարության գրանցման համար: • **Վերագոտևորում** – գործընթաց է, որը թողարկվել է վերագոտևորման թույլտվության հայցման և ձեռքբերման համար: Այն դեպքում, երբ նախատեսված շինարարական աշխատանքները դասակարգված են որպես ցածր ռիսկայնության, ապա շինարարության նպատակային նշանակության փոփոխությունը բնակելիից հասարակականի չի պահանջվում, գործընթացները ամփոփ կերպով պարզեցված են մեկ քայլում: e-Permits-ի շրջանակում որպես տեղեկատվական միավոր կարող է դիտարկվել Դեպքը (Գործը). Սա էլ-հայտատուի (էլ-նիշքավորող) կողմից e-Permits շինարարության թույլտվության ձեռարկման առանձին միջոցառում է: Կախված հայտատուի կողմից հայցվող թույլտվության տեսակից՝ աշխատանքային շրջանառությունը համակարգում կլինի տարբեր: Բոլոր գործերը կարելի է հետևել ըստ իրենց փաստաթղթաշրջանառության (համակարգում գործի սցենար)՝ կախված իրենց տեսակից: Յուրաքանչյուր աշխատանքային շրջանառություն բաղկացած է մի շարք առանձին հաջորդական առաջադրանքներից, որոնք գործը մի համակարգից ուղղորդում են դեպի մյուս համակարգ ու սահմանում վերջնական արդյունք: Որպես e-Permits-ի գլխավոր ֆունկցիաներ կարող են թվարկվել հետևյալները՝ • Օգտատիրոջ նույնականացումը, • Օգտատիրոջ ստորաբաժանումը ըստ համակարգում իրենց հատկացված դերի, • Յուրաքանչյուր օգտատիրոջը անհատական աշխատանքային միջավայրի տրամադրում համապատասխան համակարգում իրենց հատկացված դերի, • Հայտադիմումի մուտքագրում (վերանայում, թարմացում, վերամուտքագրում), • Թույլտվության հատկացման վերաբերյալ որոշում՝ (հաստատում, մերժում) կախված արդյունքների վավերականությունից, • Թույլտվության տրամադրում՝ կախված Հայտատուի ունեցած անհրաժեշտությունից, • Մերժման նամակի տրամադրում, էլ-ստորագրում և ստացում, • Ճշգրիտ փաստաթղթաշրջանառություն՝ կախված դրա տեսակից, • Օգտատերերի միջև կապի ապահովում՝ կախված համակարգում նրանց ունեցած դերից, • Հայտատուների և թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվության կուտակում միասնական տվյալների բազայում (գրանցամատյան). Համակարգի օպերատորների կողմից գրանցամատյանին մուտքի ապահովում: Տվյալների տեղադրման համար լուծումը կիրառում է էլեկտրոնային ձևանմուշներ, որոնք նախագծված են մշակման ժամանակաշրջանում գործող օրենքներին և կարգերին համապատասխան: Համակարգի օգտատիրոջ ինտերֆեյսը դինամիկ և անհատականացված է տարբեր գործընթացների դերակատարների (օգտատիրոջ դերեր) համար, ներառյալ՝ • **Տեղական ինքնակառավարման մարմին** – աշխատանքային միջավայր, որը տրամադրում է գործառույթներ ստացված հայտադիմումների գործընթացավորման համար՝ ըստ նախագծված գործընթացային հոսքի: Այն տրամադրում է ընթացիկ հայտադիմումների ցանկը, ժամկետանց հայտադիմումներ և ստացված ծանուցումներ: • **Տեղական ինքնակառավարման մարմնի գրանցման կետ** – աշխատանքային միջավայրը

	տրամադրում է մուտքագրման հայտադիմումի դիտում, նախագծեր, թույլտվություններ և «կատարել» ցանկ: Այն նաև տրամադրում է ստացված հաղորդագրությունները: Աշխատանքային միջավայրը թույլ է տալիս մուտքագրել, ուղղել և մշտադիտարկել հայտադիմումները: • **ՀՀ կադաստրի կոմիտե** – աշխատանքային միջավայրը տրամադրում է գործառույթներ՝ ստացված հայտադիմումների գործընթացավորման համար՝ ըստ նախագծված գործընթացային հոսքի: Այն տրամադրում է ընթացիկ հայտադիմումների ցանկը, ժամկետանց հայտադիմումները, ավարտված հայտադիմումները և ստացված հայտադիմումները: • **Քաղաքաշինության կոմիտե** – աշխատանքային միջավայրը տրամադրում է ծանուցումների ցանկը, ինչպես նաև հայտատուներին տրամադրված շինարության և շահագործման թույլտվությունների ողջ ցանկը: • **Պետական եկամուտների կոմիտե** – աշխատանքային միջավայրը տրամադրում է ստացված ծանուցումների ցանկը, ինչպես նաև հայտատուներին տրամադրված շինարարության և շահագործման թույլտվությունների ողջ ցանկը: • **Հայտատու** – աշխատանքային միջավայրը տրամադրում է մուտքագրված հայտադիմումի դիտում, նախագծեր, թույլտություններ և «կատարել» ցանկը: Այն նաև տրամադրում է ստացված հաղորդագրությունները: Աշխատանքային միջավայրը թույլ է տալիս կատարել հայտադիմումների մուտքագրում, ուղղում և մշտադիտարկում: • **Գազամատակարարման ընկերություն** – աշխատանքային միջավայրը տրամադրում է տեխնիկական պայմանների և գործառույթների ցանկ՝ այն կցելու և հետ գործընթացին մուտքագրելու համար: Այն նաև թույլ է տալիս դիտել տրամադրված լիազորագրերը և ստացված ծանուցումները: • **Էլեկտրաէներգիայի մատակարար կազմակերպություն** – աշխատանքային միջավայրը տրամադրում է տեխնիկական պայմանների և գործառույթների ցանկ՝ այն կցելու և հետ գործընթացին մուտքագրելու համար: Այն նաև թույլ է տալիս դիտել տրամադրված լիազորագրերը և ստացված ծանուցումները: • **Ջրամատակարարման կազմակերպություն և ընկերություններ** - աշխատանքային միջավայրը տրամադրում է տեխնիկական պայմանների և գործառույթների ցանկ՝ այն կցելու և հետ գործընթացին մուտքագրելու համար: Այն նաև թույլ է տալիս դիտել տրամադրված լիազորագրերը և ստացված ծանուցումները: • **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին** – աշխատանքային միջավայրը տրամադրում է օգտատիրոջը, որպես ընդունող հանձնաժողովի անդամի, մուտքագրված ծանուցումների ցանկը (այն նախագծված է գործող կարգին համապատասխան, որի համաձայն ծանուցումների ուղարկման ողջ պատասխանատվությունը դրվում է հայտատուի վրա): • **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին** – աշխատանքային միջավայրը տրամադրում է օգտատիրոջը որպես ընդունող հանձնաժողովի անդամի մուտքագրված ծանուցումների ցանկը (այն նախագծված է գործող կարգին համապատասխան, որի համաձայն ծանուցումների ուղարկման ողջ պատասխանատվությունը դրվում է հայտատուի վրա): • **Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին** - աշխատանքային միջավայրը տրամադրում է օգտատիրոջը որպես ընդունող հանձնաժողովի անդամի մուտքագրված ծանուցումների ցանկը (այն նախագծված է գործող կարգին համապատասխան, որի համաձայն ծանուցումների ուղարկման ողջ պատասխանատվությունը դրվում է հայտատուի վրա): Համացանցի միջոցով արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացնելու, ցանցի անխափան ու անվտանգ շահագործման սպասարկումն իրականացնելու նպատակով համակարգը սպասարկող ընկերությունը պարտավոր է իրականացնել հետևյալ գործառույթները.

	1. Համակարգում ներառված աշխատանքային գործընթացների (Workflows) կառավարում և անխափան աշխատանքների ապահովում 2. Համակարգում առկա դերերի (Roles), օգտատերերի (Users) և համապատասխան թույլտվությունների (Permissions) կառավարում, 3. Տվյալների շտեմարանի աշխատանքի մոնիտորինգ և տվյալների ամբողջականության ապահովում, 4. Համակարգի աշխատանքի և տվյալների անվտանգության ապահովում 5. Համակարգի անխափան աշխատանքի ապահովում, 6. Համակարգի հարակից ինֆորմացիոն կայքի դիմային մասի (front-end) կատարելագործման, ինչպես նաև համակարգչային (website) և հեռախոսային (mobile) տարբերակների՝ օգտագործողին հնարավորինս հարմարեցված և պարզեցված գործարկումը, 7. Գործընթացների օպտիմալացում և նոր պահանջների ապահովում • Մուտքի մեկ պատուհանիhttps://e-permits.am/ դոմեյնի և https://cpms.e-permits.am/ ենթադոմեյնային տիրույթում տեղադրել TLS համապատասխան սերտիֆիկատ՝ առնվազն մեկ տարի ժամկետով: • Ավարտական ակտի հայտի գործընթացի վերամշակում • Լրամշակել N5 ձևանմուշը՝ ապավալցնելով շինարարակն և տեխնիկական հսկման կազմակերպությունների տվյալները • Պարզեցնել մեկ պատուհանի աշխատակցի գործառույթը՝ փոխարինել քաղաքացու թղթային օրինակի վրա ստորագրություն դնելու և հետագա սկանավորմամբ, • Համակարգի գործներության ընթացքում ի հայտ եկած խնդիրների շտկում • Քանդման թույլտվությունների գործընթացի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում • Ընդունող հանձնաժողով գործընթացի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում • Շահագործման թույլտվություն գործընթացի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում • ՏԻ մարմինների կողմից տրված շինարարության և (կամ) քանդման թույլտվությունների, դրանց հիման վրա շինարարություն և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ հաշվետվության ձևավորում • Կարճ հաղորդագրությունների միջոցով ծանուցումների համակարգի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում • Վերագոտևորում թույլտվություն գործընթացի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում 8. Համակարգում առկա ծանուցումների ենթահամակարգի կառավարում, որը հնարավորություն կտա կառուցապատման թույլտվության համար դիմում ստացած տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին, տեսչական մարմնի պատասխանատուներին և հայտատուին տեղեկություն ստանալու դիմումին պատասխանելու օրենքով սահմանված ժամկետի և այդ ժամկետը լրանալուն մնացած օրերի թվի մասին, 9. Համակարգի օգտատերերի (Users) գրաֆիկական արտապատկերման (interface) բարելավում, արդիականացում, օգտագործողի հարմարավետության հետազոտության նախագծի (user experience design) 10. Համակարգում մշտադիտարկման ենթահամակարգի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում (system monitoring) 11. Խնդիրների հայտարարման ենթահամակարգի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում (error reporting), 12. Համակարգի օգտագործման վիճակագրության ենթահամակարգի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում (usage statistics), 13. Լոգավորման ենթահամակարգի ուսումնասիրություն, անհրաժեշտության պարագայում՝ արդիականացում (system logging) 14. Իրականացնել բազմաշերտ ցանցային անվտանգություն (Firewall, Web Firewall), ցանցային ներխուժման փորձերի ախտորոշում և արգելափակում, սերվերային սարքավորումների մոնիթորինգ: Web Firewall-ի առկայությունը անհրաժեշտ է BackEnd թողարկման սերվերի IP

	հասցեները անտեսանելի դարձնելու համար: 15. Ապահովել տարբեր պետական մարմինների հետ գոյություն ունեցող միացումների անխափան աշխատանքը՝ իրականացնել սերվերների և երթուղավորիչների կարգաբերում և սպասարկում (Server/Router configuration and maintenance): 16. Իրականացնել տվյալների բազայի օրական պահուստային կրկնօրինակում (backup) ֆիզիկական այլ հասցեում գտնվող կրիչի/սերվերի վրա ինչպես նաև Շաբաթական կտրվածքով կատարել համակարգի տվյալների բազայի պահուստային կրկնօրինակում լազերային կրիչի վրա՝ երկու օրինակից, որից մեկը պահվի Քաղաքաշինության կոմիտեի ցանցային ադմինիստրատորի մոտ՝ չիրկիզվող պահարանում, մյուսը՝ այլ հասցեում տեղադրված սերվերային ենթակառուցվածքը ապահովող ցանցային ադմինիստրատորի մոտ: 17. Ապահովել համակարգերին և ծառայություններին տարբեր շահառուների հասանելիության կարգաբերումը՝ սահմանափակելով դրանց ըստ IP-ների և ծառայությունների: 18. Իրավական ակտերում կատարված փոփոխությունների դեպքում՝ պատվիրատուի հետ համատեղ իրականացնել համակարգում անհրաժեշտ փոփոխություններ, այդ թվում՝ ֆունկցիոնալ նոր գործիքների ներդրում: 19. Իրականացնել Պետական փոխգործելիության հարթակի շրջանակներում անհրաժեշտ համակցումները և տվյալների ընթացիկ անխափան փոխանակման ինտեգրացիան այլ պետական տվյալների բազաների հետ: 20. Իրականացնել Համակարգի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ թարմացումների եւ փոփոխությունների անվճար տեղադրում, բացառությամբ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքում: 21. Մշակվող բոլոր ծրագրային կոդերը անհրաժեշտ է սինխրոնիզացնել git շտեմարանում, սպասարկողը պետք է աշխատի git շտեմարանի ծրագրային կոդի վրա ծրագրային սերվերում (development server), որը պետք է հասանելի լինի պատվիրատուին: Պատվիրատուի կողմից կատարված փոփոխությունները հաստատվելուց և լիարժեք թեստավորումից հետո իրականացված փոփոխությունները կտեղափոխվեն թողարկման սերվեր (production server): 22. Ապահովել համակարգերում լոգավորման մեխանիզմի ներդրումը, որի միջոցով համակարգերում իրականացված գործընթացների ամբողջական տեղեկատվությունը կփոխանցվի տեխնիկական սպասարկման համար առանձնացված տվյալների բազա: Սպասարկողը պետք է աշխատի DataBase transparent proxy access սերվերում, տվյալների բազայի հետ կատարվող բոլոր գործընթացները լոգավորելու համար: 23. Պատվիրատուի պահանջով համակարգում բոլոր օգտվողների կատարված գործողությունների վերծանումների տրամադրում: 24. Համակարգերի հետ աշխատող պատվիրատուի անձնակազմի տեխնիկական աջակցություն և Աշխատակիցների ուսուցում կայքից գրագետ օգտվելու համար: 25. Կայքի responsive design-ի ապահովումը բջջային հեռախոսներում և պլանշետներում, երաշխիքային սպասարկման շրջանակներում կայքի դոմեյնի, հոսթինգի, հիպերտեքստային ցանցային արձանագրության (https) ծառայությունների ապահովումը, և ապահովվի համակարգերում յուրաքանչյուր գործողության պատասխանը ժամանակի սահմանափակման չափի պահանջը (max 3 վայրկյան): 26. Կատարողը պետք է ապահովի կայքի շուրջօրյա հասանելիություն, համակարգը ամսվա մեջ կարող է հասանելի չլինել 24 ժամ: 27. Ապահովել Համակարգի խափանումների վերաբերյալ Պատվիրատուի կանչերին արձագանքում (մասնագետի ժամանում)՝ համապատասխան կանչի պահից ոչ ուշ, քան 1 ժամվա ընթացքում: 28. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող խափանումները, թերությունները և բացթողումները տարանջատվում են երկու տեսակի՝ ա. Անհետաձգելի շտկում պահանջող խափանումներ, թերություններ և բացթողումներ, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը և որոնց առաջացման դեպքում շտկման համար տրամադրվում է առավելագույնը 1 օր: բ. Համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված խափանումներ, թերություններ և բացթողումներ, որոնց շտկման համար տրամադրվում է առավելագույնը 5 օր:

	29. Իրականացնել համակարգի խափանումների, աշխատանքի ընթացքում առաջացող թերությունների և բացթողումների շտկում /անհրաժեշտ տեխնիկական աշխատանքները Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելուց հետո/. ա. Ընթացիկ կապի միջոցների հետ կապված խափանումների դեպքում շտկման համար տրամադրվում է առավելագույնը 1 ժամ: բ. Ծրագրային միջամտություն պահանջող խափանումների կամ թերությունների շտկման համար տրամադրվում է առավելագույնը 3 ժամ: գ. Տրամաբանորեն սխալ ծրագրավորման արդյունքում ի հայտ եկած խափանումների և թերությունների շտկման համար տրամադրվում է առավելագույնը 12 ժամ: դ. Համակարգերի սերվերային ապահովման միջոցներում ի հայտ եկած բարդ խնդիրների, տվյալների բազայի փոփոխությամբ պայմանավորված կամ ծրագրային թարմացումների բացակայության պատճառով ի հայտ եկած խափանումների կամ թերությունների շտկման համար տրամադրվում է առավելագույնը 24 ժամ/ամսեկան: **Կիրարկումներ** Microsoft SQL Server 2012 տվյալների շտեմարանի սպասարկման և կառավարման փորձ, MySQL տվյալների շտեմարանի սպասարկման և կառավարման փորձ, Microsoft ReportingServices հաշվետվությունների կառավարման համակարգի հմտություններ, Microsoft .Net framework and C# լեզվի հմտություններ, SOAP, WSDL, WSFL և XML-RPC տեխնոլոգիաների, BPMN նշանագրություն և BPML լեզվի, WebAssembler.Net փաթեթի հիման վրա ծրագրային լուծումների ստեղծման և սպասարկման փորձ, WordPress համակարգի հիման վրա ստեղծած կայքերի կառավարման, սպասարկման և այլ ծրագրային փաթեթների, ծրագրային լեզուների, ծրագրային միջավայրերի, համակարգերի կիրարկումներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

Ս. Սկրտչյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ>> ՍՊԸ
ք. Երևան, Շահումյան 7փ, 12 տ
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570063970690100
ՀՎՀՀ 01298099

Տնօրեն՝

Վ. Բարսեղյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
25.01 .2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/501	Ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայություն				1 500 000	1 500 000	1 500 000	3 000 000	3 000 000	3 000 000	6 000 000	6 000 000	6 000 000	6 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(անհրաժեշտության դեպքում)
L.S.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ>> ՍՊԸ
ք. Երևան, Շահումյան 7փ, 12 տ
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570063970690100
ՀՎՀՀ 01298099

Տնօրեն՝

Լ. Բարսեղյան
(ստորագրություն)
L.S.

Հավելված N 3
25.01 .2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
25.01 .2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.2
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(որակավորման ապահովում)

ք. Երևան «24» 01 2022թ.

«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Բարսեղյան(անձնագիր՝ AS0247816 տրված 27.06.2018թ. 009-ի կողմից). որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2. Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ
ք. Երևան, Շահումյան 7 փող. տուն 12
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570063970690100
ՀՎՀՀ 01298099

Վաչագան Բարսեղյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

«_____» _____ 2022թ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Ամերիաբանկ» ՓԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **1570063970690100**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01298099**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900008000664	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **900 000 (ինը հարյուր հազար)**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված 5.1
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «24» 01 2022թ.

«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Բարսեղյան(անձնագիր՝ AS0247816 տրված 27.06.2018թ. 009-ի կողմից). որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/22 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ
ք. Երևան, Շահումյան 7 փող. տուն 12
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570063970690100
ՀՎՀՀ 01298099
Վաչագան Բարսեղյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

«_____» _____ 2022թ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Ամերիաբանկ» ՓԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **1570063970690100**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01298099**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **600 000 (վեց հարյուր հազար)**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.